

**Վայոց ձորի մարզպետը մասնակցել է <Գրերի գյուտից մինչև գրատպություն>
հանրապետական մրցույթի մրցանակաբաշխության հանդիսավոր ցերեկույթին**

18.12.2012



Դեկտեմբերի 14-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ և ՀՀ ԿԳՆ Արմեն Աշոտյանի, ԱԺ պատգամավորների մասնակցությամբ, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հայոց տանը տեղի է ունեցել հայ գրատպության 500-ամյակին նվիրված <Գրերի գյուտից մինչև գրատպություն> հանրապետական մրցույթի մրցանակաբաշխության հանդիսավոր ցերեկույթը: Հանդիսությանը մասնակցել է նաև ՀՀ Վայոց ձորի մարզպետ Էդգար Ղազարյանը:

Մրցույթն անցկացվել է երեք փուլերով՝ տարածաշրջանային, մարզային հանրապետական:

Տարածաշրջանային փուլին մասնակցել են ավելի քան 420 դպրոցներ, մարզային փուլին՝ տարածաշրջաններում լավագույնը ճանաչված 71 դպրոցներ, իսկ հանրապետական փուլին՝ 12 դպրոցներ:

Հանդիսության բացման խոսքով հանդես է եկել Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Տ. Վարդան արեղա Նավասարդյանը, իսկ ողջույնի խոսքով՝ ՀՀ ԿԳՆ Արմեն Աշոտյանը:

Հայրապետական մրցանակի է արժանացել Արմավիրի մարզի Վաղարշապատի Խ. Աբովյանի անվան թիվ 4 հիմնական դպրոցը, <Լավագույն սցենար> անվանակարգում հաղթող է ճանաչվել Երևանի Ա. Միկոյանի անվան թիվ 166 հիմնական դպրոցը, <Լավագույն երաժշտական կատարում> անվանակարգում՝ Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոցը, իսկ <Լավագույն բեմադրություն> անվանակարգում՝ Գեղարքունիքի մարզի Գավառի ավագ դպրոցը:

Մի շարք դպրոցներ արժանացել են խրախուսական հատուկ մրցանակների: Վերջում Նորին Սրբությունն իր գնահատանքն է հայտնել բոլոր կազմակերպիչներին և մասնակիցներին: